ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, թիվ 85, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ
araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 09, 08.08.2022թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 03.08.2022թ. որոշում (որոշում **ՈՐԽ0102-13/L**) Հրազդան մասնաճյուղի կանոնադրությունում փոփոխություն կատարելու մասին:

AraratBank
0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք.Երևան

Կոդ: ՈՐԽ0102-13/L
Դաս: ԾԳ
«03» օգոստոս 2022թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՐԱԶԴԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21[6]-ի 1-ին մասի ժդ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1 կետի ժդ) ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախատեսվում է Հրազդան մասնաճյուղի գործունեությունը նոր տարածքում ծավալել՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2011 թվականի մարտի 10-ի թիվ 04/04 որոշմամբ հաստատված Հրազդան մասնաճյուղի կանոնադրությունը հաստատել նոր խմբագրությամբ (կցվում է):
2. Հանձնարարել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Գործադիր տնօրեն Միեր Անանյանին ապահովել Մարզ Կոտայք, համայնք Հրազդան Հրազդան ք. Միկրոշրջան թաղամաս, 84/2-84/3 ոչ բնակելի տարածք հասցեում բանկային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Հրազդան մասնաճյուղի նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության գրանցման հետ կապված գործընթացը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ **Գ. Հովհաննիսյան**